

«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
Պ Ո Ա Կ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՎՊՄԻ-ի ռեկտոր
_____ Գ.Կ. Խաչատրյան
“04 ” __04__ 2012թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

“Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ”

**Պետական ոչ առևտրային կազմակերպության
Գիտահետազոտական համալիր լաբորատորիայի**

Ընդունվել է ՎՊՄԻ գիտխորհրդում

(արձանագր. թիվ _4__ “_04__ “_____04_____ 2012թ.)

“Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ”
Պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ինստիտուտ)
Գիտահետազոտական համալի լաբորատորիայի (այսուհետ՝ Լաբորատորիա)
կանոնակարգը սահմանում է նրա կազմակերպչական և մեթոդական հիմքը ու
հիմնական խնդիրները, գործառույթները, կառուցվածքը, կազմը, աշխատանքի
ուղղությունները, ինչպես նաև ինստիտուտի ստորաբաժանումների և այլ
կազմակերպությունների հետ փոխհարաբերությունները:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնակարգը մշակված է՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության,
կրթության ոլորտում նորմատիվ կարգավորող փաստաթղթերի և Ինստիտուտի
կանոնադրության:

1.2. Լաբորատորիան հանդիսանում է Գիտելիքի և գիտության կենտրոնի,
Ֆիզիկամաթեմատիկական և Կենսաբանաքիմիական ֆակուլտետների
կառուցվածքային միավոր:

1.3. Լաբորատորիայի աշխատանքներն իրականացվում են համապատասխան
ամբիոնների վարիչների և դեկանների կողմից հաստատված պլանով ու գրաֆիկով:

1.4 Լաբորատորիայի աշխատակիցների աշխատանքային պայմանները
սահմանվում են համաձայն պաշտոնի նկարագրերի և կնքված աշխատանքային
պայմանագրերի:

2. Լաբորատորիայի հիմնական խնդիրներն ու գործառույթները

Լաբորատորիայի հիմնական խնդիրներն և գործառույթներն են.

2.1. Կազմակերպել Լաբորատորիայի գործունեությունը համաձայն Ֆակուլտետների
ուսումնական և մեթոդական աշխատանքների՝ նախապես դեկանների կողմից
հաստատված տարեկան պլանի, ինչպես նաև ամբիոնների աշխատանքների
թեմատիկային վերաբերվող նորմատիվ և տեղեկատվական նյութերին
համապատասխան:

2.2. Ապահովել գիտահետազոտական աշխատանքների ընթացքը ըստ ներկայացվող
հայտերի, ընտրել համապատասխան մեթոդիկաները և սարքավորումները
(անալիզների, չափումների, փորձարկումների և այլ կարգի հետազոտությունների
անցկացման մեթոդիկաների մշակում):

2.3. Ուղղորդել ուսանողներին մեթոդական և հետազոտական աշխատանքների կազմակերպման գործում, ապահովելով անհրաժեշտ ծրագրային և տեխնիկական սպասարկումը:

2.4. Լաբորատորիայի ուսումնամեթոդական պլանի համաձայն աջակցել Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից կազմվող, վերամշակվող դասագրքերի, մեթոդական, ուսումնական ձեռնարկների գիտամեթոդական աշխատանքներին:

2.5. Ապահովել լաբորատոր սարքավորումների (նաև նորագույն), չափիչ-ստուգիչ սարքերի շահագործման և կարգավորման հետ կապված կանոններն ու մեթոդիկաները:

2.6. Ապահովել մագիստրոսական ուսուցման դիպլոմային աշխատանքների և ասպիրանտուրայի բաժնում սովորող ուսանողների գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը Լաբորատորիայի տեխնիկական հնարավորությունների սահմանում:

2.7. Մասնակցել ուսումնական ծրագրերի մեթոդական ապահովման գիտական աշխատանքներին:

2.8. Լաբորատորիայում վերահսկել ուսումնական գործընթացը՝ ապահովելով տեխնիկայի ճիշտ օգտագործումը:

2.9. Ստեղծել ուսումնական և մեթոդական գրականության, էլեկտրոնային գրականության ֆոնդ:

2.10. Լաբորատորիան անհրաժեշտ գույքով, սրքավորումներով ապահովելու համար ներկայացնել նոր տեխնիկայի ձեռք բերման հիմնավորված առաջարկություն, ստուգել ստացվող նյութերի պիտանելիությունը և կազմել օգտագործվող նյութերի ցուցակ:

2.11. Լաբորատորիային վերաբերվող փաստաթղթերի ձևակերպման, դասակարգման և պահպանման վերահսկողություն, ինստիտուտի կանոնադրությանն ու ներքին կարգապահական կանոններին համապատասխան:

2.12. Լաբորատորիան ներկայացնում է տարեկան հաշվետվություն վերադասին:

3. Լաբորատորիայի կառուցվածքը և կազմը

3.1. Լաբորատորիայի կառուցվածքը և հաստիքացուցակը, ինչպես նաև դրանց փոփոխությունները հաստատվում են Ինստիտուտի ռեկտորի հրամանով:

3.2. Լաբորատորիայի աշխատակիցների աշխատանքի ընդունումը և զբաղեցրած պաշտոնից ազատումն իրականացվում է Ինստիտուտի ռեկտորի կողմից:

3.3. Լաբորատորիայի վարիչը համակարգում և ուղղորդում է Լաբորատորիայի աշխատանքը:

3.4. Լաբորատորիայի աշխատակիցներն ընդունվում են աշխատանքի ըստ իրենց պաշտոնի նկարագրի, որտեղ արտահայտվում են անհրաժեշտ մասնագիտական և անձնային հատկանիշերը, նրանց իրավունքներն ու պարտականությունները:

4. Աշխատանքի ուղղությունները

4.1. Կազմակերպել Լաբորատորիայի աշխատանքները համաձայն տարեկան ուսումնամեթոդական պլանի:

4.2. Ապահովել սարքավորումների ռացիոնալ օգտագործումը և պարբերաբար կատարել սպասարկման աշխատանքներ:

4.3. Օգնություն ցուցաբերել ուսանողներին ուսումնական, գիտահետազոտական աշխատանքների կատարման գործում:

4.4. Աջակցել ուսուցման գործընթացում նորարարական մեթոդիկաների համակարգման, կրթական և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ներդրման աշխատանքներին:

4.5. Համագործակցել այլ բուհերի համապատասխան լաբորատորիաների հետ:

5. Փոխհարաբերություններ այլ ստորաբաժանումների հետ

5.1. Համագործակցել Ինստիտուտի դեկանատների, ամբիոնների, լաբորատորիաների և կաբինետների հետ, ինչպես նաև ուսումնական այլ հաստատությունների լաբորատորիաների և կաբինետների հետ Լաբորատորիայի արդյունավետ գործունեության և աշխատանքի կատարելագործման համար: